

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԶԼՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ա. Ռ.

Զանգվածային լրատվության միջոցների տեսական հիմնախնդիրների գիտական ուսումնասիրություններում մշտապես կարևոր դեր է հատկացվել դրանց զարգացման պատմական շրջանների վերլուծությանը: Սա ուղղակիորեն առնչվում է նաև համացանցային ՁԼՄ-ին: Ուշագրավ է, որ համացանցային ՁԼՄ-ի պատմությունը թեև առավելագույնը երկու տասնամյակ է ընդգրկում, սակայն այդ կարճ ժամանակահատվածում հասցրել է անցնել զարգացման մի քանի շրջադարձային փուլ և հական վերակառուցումներ ապրել: Եվ Հայաստանն էլ անմասն չի մնացել այդ գործընթացներից:

Նոր մեդիայի զարգացման շրջաբաժանման առաջին մոտեցումներից մեկն առաջարկել են Իսրայելի Բար-Լյան համալսարանի հետազոտողներ Ս. Լեհման-Վիլզագը և Ն. Կոհեն-Ավիգորը՝ առանձնացնելով հետևյալ 6 փուլերը՝

- 1) ծագման կամ տեխնոլոգիական նորամուծությունների,
- 2) շուկայի ներթափանցման (0-16%),
- 3) Աճի (16-50%),
- 4) Հասունացման (50-90%),
- 5) ավանդական ՁԼՄ-ի ինքնապաշտպանություն (90% - 50% անկում),
- 6) ա) ադապտացիա (ավանդական մամուլը հարմարվում է նոր իրադրությունը՝ տարբեր հնարավորություններ զարգացնելով), բ) կոնվերգենցիա, գ) ավանդական լրատվամիջոցների անկում/անհետացում²:

Մեկ ուրիշ հետազոտող՝ Պ. Ֆլիչին, անդրադառնալով նոր մեդիայի զարգացման պատմության հարցերին, հիմնվել է տեխնոլոգիական նորամուծությունների վրա, այլ հեղինակներ հիմախնդիրը դիտարկել են թվային տեխնոլոգիաների զարգացման տեսանկյունից (Դ. Ու. Փարք, Ն. Ու. Յանկովսկի և Ս. Ջոնս հեղինակների խումբը,³ Մ. Չաու)⁴:

Հետխորհրդային տարածաշրջանում այս հիմնախնդրի վերաբերյալ ընդունված է համացանցային թերթերի պատմության շրջա-

¹ Lehman-Wilzag S., Cohen-Avigdor N. *The Natural Life Cycle of New Media Evolution //new media & society* Vol. 6(6)//, pp. 707-730.

² Նույն տեղում, էջ 712:

³ Park D., Jankowski N., Jones S. *The Long History of New Media: Technology, Historiography, and Contextualizing Newness*, New York, 2011, p. 341.

⁴ Chau M. *Evolution of New Media Technologies*, Sydney, 2008, p. 92.

բաժանման Կ. Վ. Լուչենկոյի մոտեցումը, որի հիմքում ժամանակագրական փուլայնացման սկզբունքն է (1994-2010 թթ. ժամանակահատվածում առանձնացրել է համացանցային թերթերի զարգացման 3 պայմանական փուլ՝ 1994-1998 թթ., 1999-2004 թթ. և 2005-2009 թթ.)⁵: Բնականաբար, 5 տարի անց, տեխնոլոգիական առաջընթացի ահագնացող թափը նկատի առնելով, մեկ կամ անգամ երկու փուլ ևս կարող ենք առանձնացնել:

Հայաստանյան համացանցային լրատվության դաշտի զարգացման փուլայնացման փորձեր մինչև օրս չեն արվել, թեպետ վաղուց հասունացել է նման ընդհանրական վերլուծություն անհրաժեշտությունը: Թերևս այս ուղղությունը կատարված միակ աշխատանքը հայկական զանգվածային լրատվության միջոցների զարգացման փուլերի շրջաբաժանման մոդելի առանձնացումն է, որն առաջարկել է «Նորավանք» ԳԿՀ տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ Ա. Ժամկոչյանը: Վերջինս ՀՀ-ում լրատվական դաշտի զարգացման 6 փուլ է նշում՝ 1) ազատականացում և ազգայնացում՝ 1985-1990 թթ. կեսեր, 2) տպագիր մամուլի «ոսկեդար»՝ 1990թ. կեսեր-1993 թ., 3) ճգնաժամ և փորձություն՝ 1993-1995 թթ., 4) ճգնաժամի հաղթահարում և առաջընթաց՝ 1996-2001 թթ., 5) «բարեկազմավորում» և քարոզչականացում՝ 2002-2006 թթ., 6) ցանցայնացում և մրցակցություն աճ՝ 2007 թ. մինչև օրս (նկատի է առնվում մինչև 2012 թ. առաջին եռամսյակը)⁶: Սակայն այս շրջաբաժանումն ամբողջությամբ չի արտացոլում համացանցային ԶԼՄ-ի զարգացման պատմական ընթացքը:

Հայաստանում առցանց լրատվամիջոցների ձևավորման հատկապես վաղ շրջանին առնչվող իրադարձությունները բավական աղքատ են արձանագրվել ոչ միայն մասնագիտական գրականությունից, այլ նաև ուրիշ ռեսուրսներում, որոնք այսօր հասանելի կլինեին հետազոտողին: Այդ բացը լրացնելու համար փորձագիտական հարցազրույցների միջոցով հավաքագրվել է Հայաստանի մեդիաոլորտի մոտ մեկ տասնյակ փորձագետների տեսակետը դիտարկվող հիմնախնդրի շուրջ:

Այսպես, մեդիաոլորտի 8 փորձագետներ անդրադարձել են Հայկական առցանց ԶԼՄ-ների զարգացման փուլերին և այդ գործընթացում տեղի ունեցած շրջադարձային իրադարձությունների հիմնախնդիրներին: Դրա վերաբերյալ աղբյուրների սակավությունը հաշվի առնելով՝ ստորև մասնագետներից յուրաքանչյուրի մոտեցումը կներկայացնենք հնարավորինս ամբողջական՝ ցույց տալու ոչ միայն արտահայտած տեսակետները, այլ նաև դրանց հիմնավորումներն ու մասնավոր օրինակները, քանի որ դրանց վերլուծու-

⁵ Интернет-СМИ: теория и практика /под ред. М. М. Лукиной/, М., 2010, с. 175, с. 348).

⁶ ՀՀ լրատվական դաշտի զարգացման փուլերն ըստ ոլորտի փորձագետների գնահատականների, Ժամկոչյան Ա., էլեկտրոնային ռեսուրս http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=6369

թյամբ առաջարկվել է հայկական առցանց լրատվամիջոցների պատմական զարգացման շրջաբաժանման մոտեցում:

Հայաստանի խոշորագույն առցանց լրատվական գործակալութիւններից մեկի՝ «Մեդիամաքսի» (mediamax.am) գլխավոր խմբագիր, ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ Դավիթ Ալավերդյանը հայկական առցանց ՁԼՄ-ների ողջ պատմությունը պայմանականորեն երկու փուլի է բաժանում՝ «մինչև Արմենտելը» և «Արմենտելից հետո»: Նա նշում է, որ շուկայում «Արմենտելի» մենաշնորհի ավարտն ինքնին հեղափոխական իրադարձություն է եղել հայկական առցանց մեդիաոլորտի համար, իսկ դրանից հետո՝ առայսօր, զարգացումն ընթանում է օրինաչափ և տրամաբանական աճի ճանապարհով⁷:

«Առավոտի» առցանց տարբերակի (aravot.am) խմբագիր Աննա Իսրայելյանը, հիմնախնդրին մոտենալով լրատվամիջոցների տեսակների, մատուցվող լրատվության բնույթի և որակի առանձնահատկությունների տեսանկյունից, առցանց ՁԼՄ-ի զարգացման երեք փուլ է նշում.

- 1) **կազմավորման**, երբ ի հայտ են գալիս առաջին առցանց ՁԼՄ-ը և ավանդական մամուլի կայքերը.
- 2) **սոցիալական ցանցերի ակտիվացում**, որոնք առաջ են անցնում ՁԼՄ-ից լուրերը տարածելու իմաստով, լուրն առաջինը հասցնելու դաժան մրցակցություն է սկսվում.
- 3) **սոցցանցերի՝** կարծիքների բախման և միջխմբային քննարկումների հարթակի վերածվելու, ՁԼՄ-ի աշխատանքի որակին ուշադրություն դարձնելու փուլ՝ կապված որոշ սահմանափակումների ներմուծման հետ (փորձագետի գնահատմամբ այս փուլը շարունակվում է մինչ օրս)⁸:

«Նոյյան Տապան» լրատվական գործակալության տնօրեն Տիգրան Հարությունյանը ժամանակագրական շրջաբաժանման իր մոտեցումն է առաջարկում:

1. 1995-1999 թթ. սակավաթիվ լրատվական կայքեր են ստեղծվում, որոնք օրական մինչև 30-40 հազար այցելու կարող էին ունենալ (փորձագետը հիշատակում է 1996 թ. շախմատային օլիմպիադան, անհանգստությունները մայրաքաղաքում, երբ կայքերի հանդեպ մարդկանց հետաքրքրության աննախադեպ աճ էր գրանցվել, այնպես, որ անգամ սերվերները ժամանակավորապես շարքից դուրս էին եկել):

2. 1999-2007 թթ. տպագիր թերթերն աստիճանաբար սկսում են իրենց ներկայությունն ապահովել համացանցում, սակայն դա պասիվ գործընթաց էր, հատուկ համացանցի համար նյութեր չէին պատրաստվում, իսկ զուտ համացանցային ՁԼՄ-ն քիչ էր:

⁷Փորձագիտական հարցազրույց «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր Դավիթ Ալավերդյանի հետ, 28.11.2014 թ.:

⁸Գիտական հարցազրույց առցանց «Առավոտի» գլխավոր խմբագիր Աննա Իսրայելյանի հետ, 06.12.2014թ.:

3. 2008-2009 թթ. ակտիվանում են Համացանցային ՁԼՄ-ը, և անմիջապես բարդ իրավիճակ է ստեղծվում ավանդական լրատվամիջոցների համար. լրատվական գործակալությունների և ավանդական մամուլի վաճառքները կտրուկ նվազում են, Համացանցային ՁԼՄ-ի նոր մշակույթ է ձևավորվում⁹: Մեղիա նախաձեռնությունների կենտրոնի (նախկին «Ինտերնյուս» ՀԿ, mediainitatives.am) աշխատակից, media.am կայքի համակարգող Գեղամ Վարդանյանը համացանցային ՁԼՄ-ի ձևավորման 4 փուլ է առանձնացնում.

1) 2000-2005 թթ.՝ կազմավորման փուլ, որի ավարտը կապված է հասարակություն կողմից համացանցի հնարավորությունների դիտակցման հետ:

2) 2005-2008 թթ.՝ տպագիր մամուլի կողմից համացանցի յուրացում՝ թերթի նյութերը կայքերում տեղադրելու եղանակով:

3) 2008-2010 թթ. հետխորհրդային շրջանում առաջին անգամ գրաքննության կիրառում (2008 թ. մարտի 1-21), որի հետևանքով համացանցի լսարանը տարբեր օղակներում հետաքրքրություն է առաջացնում իր նկատմամբ: Այս իրադարձությամբ դրվում է համացանցային լրատվության զարգացման հերթական փուլի սկիզբը, զուտ համացանցային լրատվական կայքեր են հայտնվում՝ tert.am, fragir.am, news.am, 1in.am և այլն, որոնք արդյունավետ մրցակցություն պայմաններում առաջ են անցնում ավանդական լրատվամիջոցներից:

4) 2010 թ.-ից մինչև օրս՝ մուլտիմեդիայի շրջան. ավանդական ՁԼՄ-ն (հատկապես թերթերը) սկսում է գրել հատուկ վեբի համար, տեսանյութեր տեղադրել և ուղիղ հեռարձակումներ կազմակերպել: Ինտերնետի արագություն բարելավման հետևանքով ընդլայնվում է մեդիաշուկան և աշխարհագրությունը: Այժմ և՛ զուտ համացանցային, և՛ թերթի հիմքով ստեղծված կայքերի միջև դաժան մրցակցության փուլն է, որտեղ չափանիշը ոչ թե տեքստն է, այլ մուլտիմեդիա հնարավորությունների օգտագործման արդյունավետությունը¹⁰: Տեղեկատվական անվտանգության փորձագետ, iDitord.org կայքի տնօրեն Սամվել Մարտիրոսյանն առանձնացնում է մեր երկրում համացանցային ՁԼՄ-ների զարգացման հիմնական փուլերը՝ քաղաքական զարգացումների դիտանկյունից: Նրա գնահատմամբ՝ առաջին քայլերն արել է արևմտյան սփյուռքը՝ ի դեմս «Կիլիկիա» (www.cilicia.com) և «Կոունկ» (groong.usc.edu) նախագծերի, քիչ ուշ՝ դարասկզբին, ասպարեզ են մտել «Պանարմենիան» (panarmenian.net), «Ա1+»-ը (a1plus.am), ևս մի քանիսը, սակայն խիստ սակավաթիվ: 2006-2007 թթ. կայքերի քանակի որոշակի աճ է գրանցվել, սակայն առաջին լուրջ աճը 2007-2008 թթ. նախագահական ընտրությունների նախընտրական

⁹ Փորձագիտական Հարցազրույց «Նոյյան տապան» լրատվական գործակալության տնօրեն Տրգրան Հարությունյանի հետ, 08.12.2014 թ.:

¹⁰ Փորձագիտական Հարցազրույց «Նոյյան տապան» լրատվական գործակալության media.am կայքի համակարգող Գեղամ Վարդանյանի հետ, 09.12.2014 թ.:

քարոզարշավի և բուն ընտրությունների հետ էր կապված: Հաջորդ վերելքը 2010 թվականին էր, երբ այցելուների թվի աճը խթանում է և առցանց լրատվամիջոցների ակտիվացումը, և տպագիր թերթերի կայքերի ստեղծման ինտենսիվացումը: 2011-2012 թթ. թերթերի ու հեռուստաընկերությունների «գաղթ» է սկսվում դեպի ցանց՝ ձևավորելով այսպես կոչված «սիմբիոտիկ մամուլը»^{*}:

2012-2013 թթ. նախագահական, հետո նաև խորհրդարանական ընտրությունների շնորհիվ թափ են առնում «պատվիրված» լրատվամիջոցները¹¹:

«Լրագրողներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպության (jnews.am) նախագահ Սուրեն Դեհերյանի կարծիքով դեռ վաղ է հայկական առցանց ՁԼՄ-ի պատմությունը փուլերի բաժանել, քանի որ առայժմ առաջին փուլն է հաղթահարվում: Այնուամենայնիվ, նա առանձնացնում է պասիվ շրջան՝ 1999-2006 թթ., երբ լրատվական կայքերն աշխատում էին արտաքին լսարանի համար, իսկ երկրի ներսում ակտիվ էին ֆորումներն ու առաջին բլոգները: 2007-2010 թթ. համացանցային լրատվության նկատմամբ հետաքրքրությունը բարձրանում է, և օգտատերերի քանակն աննախընթաց աճ է գրանցում¹²: Ըստ Ս. Դեհերյանի այժմ ակտիվ կիրառություն չըջանում ենք, որին պետք է հաջորդի համացանցի զրազետ կիրառություն փուլը¹³:

Երևանի մամուլի ակումբի նախագահ Բ. Նավասարդյանը համացանցային լրատվության զարգացման առաջին փուլն անվանում է արխիվացման շրջան, քանի որ տպագիր լրատվամիջոցների ու հեռուստատեսությունների բովանդակություն էլեկտրոնային արխիվներ են ստեղծվում, երկրորդ փուլում ձևավորվում են հատուկ առցանց լրատվամիջոցներ, երրորդում ավանդական ՁԼՄ-ն սկսում է առցանցի համար հատուկ բովանդակություն ստեղծել: Այս փուլին է առնչվում նաև ինտերնետային հեռարձակման հնարավորությունը, ընդ որում՝ ոչ միայն տեսազրկված նյութի տեղադրման, այլ հենց հոսարկման (սթրիմինգի)¹⁴ առումով: Զարգացման վերջին, այսինքն՝ ներկա փուլը «անսահման կոնվերգենցիայի» շրջանն է, որի ներսում սոցիալական ցանցերը, ավանդական ՁԼՄ-ն և դրանց առցանց տարբերակները, առցանց լրատվամիջոցները միաձուլվելով վերածվում են սպառողի հետ հաղորդակցման ընդհանուր դաշտի: Նշված բոլոր զարգացումներ-

* Խոսքը կոնվերգենցիայի գործընթացների մասին է:

¹¹ Փորձագիտական հարցազրույց տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանի հետ, 17.12.2014 թ.:

¹² Միրզայան Գ., Դեհերյան Ս., «Հայաստանում համացանցը տարածում է գտնում ամենուրեք», /Ազատ գոտի կամ էլ. Հայաստան, Լրագրողական ուսումնասիրություններ (100 էջ)/ Երևան 2012 թ., էջ 10 (էջ 10-14):

¹³ Փորձագիտական հարցազրույց «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ նախագահ Սուրեն Դեհերյանի հետ, 14.01.2015 թ.:

¹⁴ Հոսքով տվյալների փոխանցումը՝ հիմնականում ձայնի և տեսաչափի, երբ տվյալը գրեթե ստանալուն պես ցուցադրվում է ու տեսականորեն կարող է և չպահվել:

րից փորձագետն առանցքային է համարում հոսարկման հնարավորությունը (4-5 տարի առաջ), քանի որ հետագա զարգացումները դրանով են պայմանավորվել, և Հայաստանը այդ շրջանից ի վեր հետ չի մնում աշխարհում համացանցային լրատվության զարգացումներից¹⁵:

Գիտականների հայկական ասոցիացիայի նախագահ, pigh.tv բլոգը վարող Տիգրան Քոչարյանն ընդգծում է, որ առաջին փուլում ցանց մտել են տպագիր մամուլի որոշ ներկայացուցիչներ, այնուհետև տպագիր հիմք չունեցող առցանց ՁԼՄ-ն, սակայն իրական մրցակցությունը սկսվել է 2007-2008 թթ.: Ըստ նրա՝ Հայաստանի համար առցանց լրատվության շրջադարձային փուլը կապված է այլընտրանքային լրատվամիջոցների (Ֆորումներ, բլոգներ, սոցիալական ցանցեր) ակտիվացման հետ: Տ. Քոչարյանը ևս կարևորագույն գործոն համարում է տեխնիկական միջոցների զարգացման հետևանքով ինտերնետ հասանելիության բարձրացումը¹⁶:

Այս մոտեցումներից յուրաքանչյուրը և՛ հետաքրքիր է, և՛ միաժամանակ որոշ բացթողումներ ունի: Մասնավորապես գրեթե բոլոր փորձագետները, որպես ելակետ, վերցնում են որևէ մեկ չափորոշիչ՝ տեխնիկական, քաղաքական, տնտեսական կամ սոցիալական իրավիճակներ, զուտ լրատվական դաշտում տեղի ունեցող իրադարձություններ և այլն: Մյուս կողմից միևնույն շրջաբաժանման հիմքում տարբեր գործոններ են առաջադրվում, որը ևս հիմնարարային չի կարող համարվել: Ուստի, ընդհանրացնելով բերված մոտեցումները, ուսումնասիրելով հայկական գրեթե բոլոր լրատվական կայքերի պահոցները, դրանց ստեղծման և ցանցային ակտիվության փոփոխության փուլերը, տեխնիկական բոլոր փոփոխությունները, քաղաքական իրադարձությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են ունեցել մեր երկրում համացանցի և համացանցային հասանելիության զարգացման վրա, շրջադարձային անցումներն ու նոր միտումները, առաջարկում ենք հայկական համացանցային ՁԼՄ-ի զարգացման պատմությունը բաժանել հետևյալ 4 փուլերի.

1) 1991-1999 թթ.՝ նախադրյալների ստեղծման և կազմավորման փուլ:

2) 2000-2006 թթ.՝ համացանցի պասիվ յուրացման և զուտ համացանցային ՁԼՄ-ի ստեղծման փորձերի փուլ:

3) 2007-2009 թթ.՝ ինտերնետի նկատմամբ մենաշնորհի ավարտի, այլընտրանքային լրատվամիջոցների տարածման և հասարակական նշանակալիության բարձրացման փուլ:

4) 2010 թվականից՝ համընդհանուր կոնվերգենցիայի ժամանակակից փուլ:

¹⁵ Փորձագիտական Հարցազրույց Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանի հետ, 16.01.2015 թ.

¹⁶ Փորձագիտական Հարցազրույց Գիտականների հայկական ասոցիացիայի նախագահ, pigh.tv բլոգի վարող Տիգրան Քոչարյանի հետ, 26.01.2015 թ.

Այսպիսով, Հայաստանում համացանցային ՁԼՄ-ների կազմավորման և զարգացման մոտ քսանամյա պատմությունը 2015 թվականի դիտակետից կարող ենք բաժանել 4 շրջափուլերի, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է փուլի մեկնարկը և ավարտն արձանագրող որոշակի էական իրադարձություն՝ տեխնիկական, սոցիալական, քաղաքական կամ լրատվական բնույթի:

ЭТАПЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ ИНТЕРНЕТ-СМИ АРМЕНИИ

АВETИСЯН А. Р.

Резюме

История интернет-СМИ охватывает приблизительно 20-летний период, но за это короткое время пережила несколько важных этапов развития и подверглась реструктуризации. Данные процессы не обошли стороной и Армению.

Почти 20-летнюю историю формирования и развития интернет-СМИ в Армении можно разделить на 4 этапа, каждый из которых характеризуется конкретным значительным событием технического, социального, политического или информационного характера.

STAGES OF FORMATION AND DEVELOPMENT OF THE INTERNET-MEDIA IN ARMENIA

A. AVETISYAN

Abstract

The history of the internet media covers approximately 20-year period, but in that short period has experienced several important stages of development and has undergone restructuring. These processes concern Armenia, too.

Almost 20-years old history of the formation and development of the internet media in Armenia as of 2015 can be divided into four stages, each of which is characterized by specific significant event - technical, social, political or of informational nature.